

31 մարտի, 2022 թ.

Դիմում

ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությա ղեկավար Յ. Կոնջորյանին

ՀՀ ԱԺ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ա.Քոչարյանին

ՀՀ ԱԺ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ.Վարդանյանին

Հարգելի պարոնայք, կից տեսեք ներքոստորագրյալ հասարակական գործիչների առաջարկությունը: Պատրաստ ենք քննարկել այն ձեզ եւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության այլ ներկայացուցիչների հետ:

Առաջարկություն ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը

Հարգելի պատգամավորներ,

Հաշվի առնելով վերջին ժամանակներում ՀՀ մի շարք քաղաքական գործիչների կողմից Հայաստանի ինքնիշխանության վերացման նպատակահարմարության մասին հրապարակային հայտարարությունները եւ այդ հայտարարությունների լայն տարածումը զանգվածային լրատվամիջոցներով, այդ ուղղությամբ հանրային դրական կարծիքի ձեւավորման ջանքերը եւ այդ գաղափարի կործանարար նշանակությունը հայ ժողովրդի ու Հայաստանի պետականության համար, կարելու է ենք համարում ՀՀ պետական իշխանության դերակատարությունը այդ խոսույթի ազդեցությունը օրինական եւ արդյունավետ կերպով խափանելու գործում:

Հայտնի է, որ ՀՀ Քրեական օրենսգիրքը մի շարք հոդվածներով քրեական հետապնդում է սահմանում հրապարակային կերպով արվող մի շարք հայտարարությունների համար. անձին կյանքից զրկելը, մարմնական վնասվածք պատճառելը, գույքային վնաս պատճառելու սպառնալիքը, ազգային, կրոնական, էթնիկական, հասարակական, քաղաքական, եւ զանազան խմբերի նկատմամբ թշնամանքի հրահրումը, ցեղասպանության ժխտումը, արդարացումը կամ մեղմացումը եւ այլն: Այս տրամաբանությամբ, լիակատար կերպով ողջամիտ ենք համարում քրեական պատասխանատվության սահմանումը սեփական պետությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ոչնչացման կամ վերացման հրապարակային կոչերի եւ այդ կոչերի արդարացումների համար, ինչ նկատառումներով էլ դրանք ներկայացվեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ ժողովրդի ազատությունը, գոյությունը, անվտանգությունը, բարեկեցությունը եւ երջանկությունը կարող է ապահովել միայն Հայաստանի անկախ, ինքնիշխան, ժողովրդավար եւ սոցիալական հանրապետությունը, առաջարկում ենք ՀՀ ԱԺ իշխող քաղաքական խմբակցությանը հրատապ ընթացակարգով քննարկել եւ ընդունել ՀՀ ինքնիշխանության, պետականության եւ սահմանադրության անփոփոխելի դրույթների վերացման մասին հրապարակային կոչերի, այդ կոչերի արդարացումների համար քրեական պատասխանատվության սահմանման իրավական կարգավորում: Առաջարկում ենք ՀՀ օրենսդրության մեջ փոփոխություններով քրեական

հետապնդում սահմանել հետեւյալ սահմանափակ խմբերի ներկայացուցիչների համար այն դեպքում, երբ վերջիններիս ներկայացուցիչները ՀՀ ինքնիշխանության կամ պետականության վերացման, Հայաստանի Հանրապետության միջազգային իրավունքի սուբյեկտայնության դադարեցման նպատակահարմարության մասին կոչեր կամ առաջարկություններ կանեն, կամ կարդարացնեն այդպիսի կոչերը եւ հայտարարությունները.

- 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ՀՀ որեւէ պետական կամ որեւէ համայնքային ընտրություններում որպես թեկնածու մասնակցած քաղաքական ուժի անդամը, նախընտրական շտաբի անդամը, կամ թեկնածուն,
- Գործող կուսակցության ներկայացուցիչը, հիմնադիրը կամ անդամը,
- Ապագայում որեւէ պետական կամ համայնքային ընտրություններում մասնակցելու մտադրություն հայտնած կուսակցության անդամը, հիմնադիրը, ներկայացուցիչը կամ ֆիզիկական անձը,
- Պետական իշխանության մարմնի եւ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը,
- Պետական կամ համայնքային բյուջեից որեւէ չափով ֆինանսավորվող կամ կապալառու հանդիսացող կազմակերպության աշխատակիցը,
- Օտարերկրյա քաղաքացին կամ երկքաղաքացին:

Պատժամիջոցները եւ չափերը առաջարկում ենք սահմանել հետեւյալ ձեւերով եւ չափերով.

1. Կուսակցության անդամ չհանդիսացող անձանց դեպքում՝ ազատազրկում 3 տարի ժամկետով:
2. Կուսակցական անձի դեպքում. ազատազրկում 5 տարի ժամկետով եւ կուսակցական գործունեության իրավունքից եւ ԱԺ ընտրություններում որպես թեկնածու եւ ՏԻՄ ընտրություններում որպես թեկնածու առաջադրվելու իրավունքից զրկում 10 տարվա ժամկետով, նաեւ՝ անդամակցած կուսակցության գործունեության կասեցում 10 տարվա ժամկետով:
3. Պետական իշխանության մարմնի անդամ հանդիսացող, տեղական ինքնակառավարման մարմնի անդամ հանդիսացող, քաղաքացիական ծառայող հանդիսացող, համայնքային ծառայող հանդիսացող, պետական կառավարման համակարգում եւ տեղական ինքնակառավարման համակարգում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց դեպքում՝ ազատազրկում 5 տարի ժամկետով:
4. Օտարերկրյա քաղաքացու դեպքում՝ արտաքսում եւ ՀՀ մուտքի արգելք 10 տարով:
5. Երկքաղաքացիություն ունեցող անձի դեպքում՝ ՀՀ քաղաքացիությունից զրկում, արտաքսում եւ ՀՀ մուտքի արգելք 10 տարով:

Լեւոն Բարսեղյան
Արթուր Սաքունց
Դավիթ Ամիրյան
Գարեգին Միսկարյան
Լարիսա Մինասյան
Դանիել Իոաննիսյան
Ստեփան Գրիգորյան
Արաքս Մելքոնյան
Գայանե Աբրահամյան

Լեւոն

Նախաձեռնող խմբի անունից՝ Լեւոն Բարսեղյան _____